Ծրագիրը համաֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

Իրականացնող՝
Ինֆորմացիայի ազատության կենտրոն

Գործընկեր՝
Եվրոպական լրագրության կենտրոն

Տեղեկատվության մատչելիություն և հետաքննական լրագրություն առավել իրազեկված քաղաքացիների համար

Լրագրող-դասընթացավարների մրցույթ

Ծրագրի նկարագիրը.

«Տեղեկատվության մատչելիություն և հետաքննական լրագրություն առավել իրազեկված քաղաքացիների համար» ծրագիրը համաֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից և իրականացվում է «Ինֆորմացիայի ազատության կենտրոն»-ի և Մաաստրիխտում գործող «Եվրոպական լրագրության կենտրոն»-ի կողմից: Ծրագրի նպատակն է օգնել հայ բնակչությանը՝ հատկապես մարզերում, մեծացնել պետական բյուջեի, պետական ծախսերի վերաբերյալ տեղեկացվածության մակարդակը և իրազեկել կառավարության կողմից բյուջեի ծախսերի վերաբերյալ հաշվետվություն ստանալու իրենց իրավունքների մասին:

Մաաստրիխտում գործող Եվրոպական լրագրության կենտրոնի հետ համագործակցությամբ մեր ծրագիրը նպատակ ունի նաև վերապատրաստել երիտասարդ լրագրողներին, որպեսզի նրանք ավելի շատ ընդգրկվեն հետաքննական լրագրության մեջ և կարողանան քաղաքացիներին ներկայացնել հետաքրքիր և խորապես ուսումնասիրված պատմություններ արդի տարբեր հիմնահարցերի վերաբերյալ, ներառյալ պետական բյուջեի պլանավորման և դրա նպատակային ծախսման մասին: Վերապատրաստումն իրականացվելու է նկարահանվող մրցույթի ձևաչափով, որի արդյունքում արտադրվելու են լրագրողական հետաքննությունների պատմությունների աուդիովիզուալ նյութեր (էպիզոդներ)՝ հասարակության լայն զանգվածին մատուցելու նպատակով: Լրագրողական հետաքննությունների պատմությունների բովանդակությունը մշակվելու է ծրագրի ղեկավարների կողմից: Հայտատուն պարտավորվում է միայն ապահովել սույն հրավերի 2-րդ բաժնում նկարագրված ծառայությունները:

Աշխատանքի նկարագիր.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ն հայտարարում է երկու լրագրող-դասընթացավարների մրցույթ՝ աջակցելու «Տեղեկատվության մատչելիություն և հետաքննական լրագրություն առավել իրազեկված քաղաքացիների համար» ծրագրի շրջանակներում անկացվող հետաքննական-լրագրության մրցույթի մասնակիցներին՝ իրականացնելու հետաքննություն վերջիններիս հանձնարարված թեմաների վերաբերյալ: Աշխատանքը ժամանակավոր բնույթ է կրելու. լրագրող-դասընթացավարների մասնակցությունը ծրագրի ընթացքում կազմելու է ընդհանուր 6 ամիս:

Դասընթացավարների պարտականությունները.

- հետաքննական լրագրության մրցույթի շրջանակներում մշակել վերլուծական, իրազեկող և այլ անհրաժեշտ նյութեր,
- հանդես գալ ելույթներով և կիսվել մասնակիցների հետ իրենց փորձով,
- մրցույթի ընթացքում աջակցել մասնակիցներին իրականացնելու լրագրողական հետաքննություն իրենց հանձնարարված թեմաների վերաբերյալ:

Պահանջվող որակավորում, հմտություններ և փորձ.

- բարձրագույն կրթություն (Բակալավրի աստիճան),
- առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ,
- հայերենի գերազանց իմացություն,
- ինֆորմացիայի առավելագույնս մատչելի և հասանելի կերպով մատուցման հմտություն,
- հետազոտական հմտություններ,
- գրավոր և բանավոր հաղորդակցման հմտություններ, ճշտապահություն և ճկունություն,
- համակարգային մտածողություն, թիմում աշխատելու ունակություն:

Ինքնակենսագրությունների ներկայացման կարգը

Ներկայացված պահանջներին բավարարող և հետաքրքրված անձինք կարող են իրենց ինքնակենսագրությունը (CV) և վերջին 1 տարվա ընթացքում պատրաստած 3 հետաքննական ռեպորտաժներն ուղարկել foi@foi.am էլ.փոստի հասցեին: Նամակի վերնագրում անհրաժեշտ է նշել պաշտոնի անվանումը՝ «Լրագրող- դասընթացավար»:

Ինքնակենսագրությունների ներկայացման վերջնաժամկետն է **2018թ հոկտեմբերի 1-ը ժամը 24:00**

Միայն ընտրության առաջին փուլն անցած թեկնածուները կհրավիրվեն մասնակցելու հարցազրույցի: